ԼՂԻՄ. ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ՔԱՅԼ

Ինչպես արդեն հաղորդվել է, օգոստոսի 16-ին Ստեփանակերտում տեղի է ունեցել Լեռնային Ղարաբաղի բնակչության լիազոր ներկայացուցիչների համագումար։ Պատգամավորների ելույթներում, որոնք արտացոլվեցին ընդունված դեկլարացիայում, նշվում էր, որ ԼՂԻՄ-ի հայ բնակչության կամքը, որը արդարացի հարց է բարձրացրել ինքնավար մարզը Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության հետ վերամիավորելու մասին, հիմնվում է իր ճակատագիրը, իր քաղաքական և իրավական կարգավիճակը տնօրինելու, իր տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումն ապահովելու յուրաքանչյուր ժողովրդի սրբազան իրավունքի վրա։ Մարզում կառավարման հատուկ ձև մտցնելը, Լեռնային Ղարաբաղը կուսակցության մարզկոմից և ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդից զրկելը փաստորեն ինքնավար կազմավորումից խլեցին նրա առանց այդ էլ չնչին իրավունքները։

Համագումարի դեկլարացիայում ընդգծվում է, որ երկրի հիմնական օրենքի այն հոդվածը, որը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը իրավունք է տալիս ի շահ քաղաքացիների անվտանգության կառավարման հատուկ ձև մտցնել, չի վերապահում տեղական խորհուրդների գործունեությունը կասեցնելու հնարավորություն։ Իր հերթին ԽՄԿԿ կանոնադրությունը իրավունք չի տալիս վերացնելու կուսակցության մարզային կոմիտեն։ Պատգամավորները համակարծիք էին, որ հատուկ կառավարման կոմիտեն ներկայումս գոյություն ունեցող ձևով, կառավարման մեխանիզմով և իրավասություններով ի վիճակի չէ մարզը դուրս բերելու ճգնաժամային վիճակից։ Դրա վկայությունն են արդեն չորրորդ ամիսը շարունակվող գործադուլները, հենց ժողովրդի վիճակը, որը գնահատվում է ֆիզիկական ու նյութական հյուծման եզրին։ Առ այսօր վերջ չի տրված դարաբաղյան պրոբլեմի լուծման հակառակորդների սադրանքներին, որոնք խորացնում են ռեգիոնի առանց այդ էլ լարված ազգամիջյան մթնոլորտը։

Համագումարը ընտրեց 78 անդամներից բաղկացած ազգային խորհուրդ, որի առաջնահերթ խնդիրները համարվեցին ԼՂԻՄ-ի իրադրության կայունացումը, ազգամիջյան կոնֆլիկտներ թույլ չտալը, աշխատանքային ռիթմի վերահաստատումը, ռեգիոնում ապրող բոլոր ազգերի և ազգությունների ներկայացուցիչների բարիդրացիական հարաբերությունների վերահաստատումը։

Պատգամավորները ափսոսանք հայտնեցին, որ ադրբեջանական կողմը հրաժարվել է համագումարի աշխատանքին մասնակցելուց, դրանով իսկ չօգտագործելով փոխադարձաբար մերձենալու, հասունացած հարցերը պաղատենտական ուղիով համատեղ լուծելու ռեալ հնարավորությունները։

Տեղի ունեցավ ազգային խորհրդի առաջին նիստը։ Դրա նախագահ ընտրվեց ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ, կուսակցության Մարտունու շրջկոմի առաջին քարտուղար Վաչագան Սանթուրի Գրիգորյանը, տեղակալներ՝ ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեի անդամ, ժողովրդական վերահսկողության մարզային կոմիտեի նախագահ Վլադիմիր Հայրապետի Թովմասյանը և կուսակցության Ստեփանակերտի քաղկոմի առաջին քարտուղար Վալերի Աբգարի Աթաջանյանը։

Ընթացիկ աշխատանքի ղեկավարման համար ազգային խորհուրդը իր կազմից ընտրեց 17 անդամից բաղկացած նախագահություն։ Ազգային խորհուրդը և նրա նախագահությունը, ընդունելով ԽՄԿԿ ծրագիրն ու կանոնադրությունը, գործելով խորհրդային օրենքների շրջանակներում, ի շահ ժողովրդի իրենց գիծը վարում են ժողովրդական դեպուտատների տեղական խորհուրդների, կուսկոմիտեների, կոմերիտմիության, աշխատավորական կոլեկտիվների խորհուրդների, հասարակական կազմակերպությունների միջոցով։

Համագումարը հատուկ շրջանի պարետին, ԽՍՀՄ ՆԳՄ ներքին զորքերի և խորհրդային բանակի ստորաբաժանումների բոլոր զինծառայողներին կոչ արեց բնակչության հետ ակտիվորեն համագործակցել ռեգիոնում խաղաղության շուտափույթ ապահովման նպատակով։

Համագումարը նաև ընդունեց ադրբեջանական ժողովրդին ուղղված դիմում, որով մտահոգություն արտահայտեց երկու հարևան ժողովուրդների հարաճուն օտարացման կապակցությամբ։ Համագումարը ադրբեջանական ժողովրդին կոչ արեց փոխադարձաբար ճանաչել միմյանց անկապտելի իրավունքները, դիմել մեր զավակների խաղաղ ապագան ապահովող կոնկրետ քայլերի, որոնք վաղը պետք է ապրեն և աշխատեն այս հողի վրա։

Համագումարը հայտարարեց իր վճռականությունը հետևողականորեն հասնելու Խորհրդային Հայաստանի հետ ԼՂԻՄ-ի վերամիավորման և ԽՍՀՄ Գերագույն խորհրդին խնդրեց այլևս չձգձգել պրոբլեմի արմատական լուծումը։

Համագումարը մարզի բնակչությանը կոչ արեց դադարեցնել գործադուլները և ազգային խորհրդին հանձնարարեց անհրաժեշտ բոլոր միջոցները ձեռնարկել մարզի ամբողջ տարածքում աշխատանքային բնականոն ռիթմը վերականգնելու նպատակով։

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի սեփ. թղթ.)
Ստեփանակերտ